

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2012Թ ՄԿՈՒԶԱԿ-Ի ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԲԱՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ «Մասնագիտական կրթության և ուսուցման զարգացման ազգային կենտրոն» հիմնարկը մասնագիտական կրթության և ուսուցման համակարգում իրականացվող բարեփոխումների ծրագրին, բովանդակությանը և իր առջև դրվող խնդիրներին համապատասխան 2012թ. ընթացքում շարունակել է իր գործունեությունը: Ինչպես նախորդ տարիներին, այնպես էլ 2012թ. ընթացքում կատարված բոլոր աշխատանքները համաձայնեցվել են ՀՀ ԿԳ նախարարության հետ և նախատեսվել են հիմնարկի տարեկան աշխատանքային պլանում: Այն հաստատվել է «Կրթության ազգային ինստիտուտ» ՓԲԸ տնօրենի կողմից: Տարվա ընթացքում իրականացված աշխատանքները նպատակաուղղված են եղել բարեփոխումների ձեռք բերված մակարդակների պահպանմանը, հետագա խորացմանն ու ամրապնդմանը: 2012 թվականին կատարված աշխատանքների ամփոփումը նպատակ ունի ամբողջական ձևով ներկայացնել կատարվածը և նախանշել հետագա տարիների անելիքների ուղղությունները:

1. ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Կարևորելով անհրաժեշտ պատրաստվածություն ունեցող մարդկային ռեսուրսի դերը ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների հաջող ընթացքի համար, ՄԿՈՒԶԱԿ-ը 2012թ. շարունակել է համակարգում զբաղված կամ դրա հետ ուղղակի առնչություն ունեցող մասնագետների տարբեր խմբերի համար իրականացվող վերապատրաստումները:

Վերապատրաստումներն իրականացվել են նախապես կազմված և հաստատված ծրագրերին և ժամանակացույցին համապատասխան: Վերապատրաստման ծրագրերը կազմելիս հաշվի է առնվել.

- տվյալ խմբի նախորդ վերապատրաստման թեմատիկան և ներառված հարցերի վերաբերյալ խմբի անդամների կարծիքները,
- ուսումնական հաստատություններում անցկացված մշտադիտարկումների ընթացքում բացահայտված խնդիրները,
- նախորդ վերապատրաստումներից հետո ուսումնական հաստատություններից ստացված առաջարկությունները,
- ԿԳ նախարարության առաջարկությունները վերապատրաստման ծրագրերում պարտադիր ներառման ենթակա հարցերի վերաբերյալ:

Վերապատրաստումներն իրականացվել են հետևյալ խմբերի համար

- կրթության և գիտության նախարարության 15 աշխատակիցների համար՝ 2 փուլով
- ՄԿՈՒԶԱԿ-ի 15 աշխատակիցների համար՝ 2 փուլով,
- նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատությունների 920 դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների համար,
- ուսումնական հաստատությունների 40 տնօրենի և փոխտնօրենի համար,
- 3 մարզերի ուսումնական հաստատությունների կառավարման խորհրդի 81 անդամների համար,
- պետական կրթական չափորոշիչներ մշակող 28 փորձագետների համար,
- 12 տարածաշրջանային պետական քոլեջների հաշվապահության 24 աշխատողների համար,
- յուրաքանչյուր ուսումնական հաստատության 2-ական աշխատակիցների համար՝ էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգը կիրառելու նպատակով:

Վերջին երկու խմբերի վերապատրաստումներն առաջին անգամ էր իրականացվում և պայմանավորված էր ուսումնական հաստատությունների կառավարման համակարգում ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտությամբ: Այս վերապատրաստումներն իրականացվել են այն կազմակերպությունների կողմից, որոնք նաև ուսումնական հաստատություններին տրամադրելու են անհրաժեշտ ծրագրային փաթեթները և սպասարկելու են դրանց կիրառումը:

Առաջին 6 խմբերի անձանց վերապատրաստումները պարբերական բնույթ ունեն և իրականացվում են 18 ժամ տևողությամբ ծրագրերով, 3 օրերի ընթացքում: Քանի որ վերապատրաստումներն իրականացվում են ուսումնական տարվա ընթացքում, այդ

պատճառով էլ նպատակահարմար չի համարվում վերապատրաստվողներին մեծ հեռավորությունների վրա տեղափոխելը և որոշակի ժամանակով աշխատանքից կտրելը: Դա առաջին հերթին վերաբերվում է դասախոսներին և ուսումնական հաստատությունների ղեկավարներին: Նրանց վերապատրաստումներն հիմնականում կազմակերպվում է ուսումնական պարապմունքներից հետո կամ մոտիկ գտնվող մեկ այլ ուսումնական հաստատությունում: Վերապատրաստումների հիմնական մասը անց է կացվում գործնական հանձնարարություններ կատարելով: 2012թ. ընթացքում վերապատրաստված 920 դասախոսներն ու արտադրական ուսուցման վարպետները ներկայացնում են Հայաստանի բոլոր ՄԿՈՒ հաստատությունները՝ բացի արվեստի և առողջապահության հաստատություններից: Արդյունքում ստացվում է, որ ներկա դրությամբ Հայաստանի ՄԿՈՒ հաստատությունների գրեթե բոլոր դասավանդողները, որոնք պարապում են նոր տիպի պետական կրթական չափորոշիչների հիման վրա կազմված ուսումնական փաստաթղթերով, առնվազն մեկ անգամ արդեն վերապատրաստվել են: Նույնը վերաբերում է նաև ուսումնական հաստատությունների ղեկավարներին: ՄԿՈՒ հաստատությունների ղեկավարների հիմնական մասը արդեն առնվազն 2 անգամ վերապատրաստվել են նոր տիպի ուսումնական փաստաթղթերով գործընթացը կազմակերպելու հարցերով:

Ուսումնական հաստատությունների կառավարման խորհրդի անդամների վերապատրաստում իրականացվում է երրորդ անգամ, ընդ որում 2012թ. վերապատրաստման խմբերում ներգրավված են եղել ոչ միայն տվյալ մարզի տարածաշրջանային քոլեջների խորհրդի անդամները, այլ նաև մյուս հաստատությունների խորհրդի անդամները: Այս խմբի անձանց վերապատրաստումները բավականին մեծ կարևորություն ունեն, որովհետև կառավարման այս մարմինները Հայաստանում 5 տարուց ոչ ավել պատմություն ունեն և դրանցում ներգրավված ֆիզիկական անձինք բավականին լուրջ դժվարություններ են ունենում իրենց լիազորություններով սահմանված գործառույթներն իրականացնելիս: Դրա համար էլ անհրաժեշտ է համարվել իրականացնել նաև նրանց վերապատրաստումները:

Ուրախալի է, որ տարիների ընթացքում ձևավորվել է վերապատրաստումներ իրականացնող փորձագետների մի խումբ, որի անդամները զգալի փորձ են ձեռք բերել այս աշխատանքները կատարելու առումով:

Դասավանդողների և ընդհանրապես ՄԿՈՒ հաստատությունների վերապատրաստման մի փուլ էլ համատեղվել է գործընթացի մշտադիտարկման հետ, որի ընթացքում յուրաքանչյուր հաստատությունում բացահայտված խնդրահարույց հարցերի վերաբերյալ անց է կացվել 6 ժամ տևողությամբ վերապատրաստում:

2. ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտական կրթության բնագավառի տարբեր փաստաթղթերի նախագծերին փորձագիտական եզրակացություններ տալը ՄԿՈՒԶԱԿ-ի կանոնադրական պարտականություններից մեկն է: Փորձաքննության ենթակա են պետական կրթական չափորոշիչների նախագծերը, ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը, ուսումնական ձեռնարկները և ուսումնամեթոդական նյութերը, ուսումնական հաստատությունների կողմից կազմված տարբեր կարճաժամկետ դասընթացների ծրագրերը, ինչպես նաև մասնագիտական կրթության վերաբերյալ այլ նյութեր, որոնք տարբեր ժամանակահատվածներում կարող են առաջարկվել կիրառելու համար: Փորձաքննության աշխատանքների առանձին խումբ է կազմում տարբեր տեսակի իրավական և նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ կատարելը: 2012թ. ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ը նշված բոլոր ուղղություններով փորձաքննություններ անցկացնելու հանձնարարականներ է ստացել և կատարել է անհրաժեշտ աշխատանքները:

Փորձաքննության աշխատանքների հիմնական և մշտապես իրականացվող մասը վերաբերվում է պետական կրթական չափորոշիչների նախագծերի, ուսումնական պլանների ու մոդուլային ուսումնական ծրագրերի փորձաքննությանը: Այս փաստաթղթերը ՄԿՈՒԶԱԿ-ում անցնում են տեխնիկական փորձաքննություն, որի ընթացքում ստուգվում է նրանց համապատասխանությունը ընդունված ձևաչափերին, հաշվարկների ու ձևակերպումների ճշտությունը, «Իրավական ակտերի մասին» ՀՀ Օրենքի պահանջներին դրանց համապատասխանությունը և այլն: Այս փաստաթղթերի բովանդակային փորձաքննությունը ՄԿՈՒԶԱԿ-ը կազմակերպում է ներգրավելով իրավասու օղակների: Պետական կրթական չափորոշիչի պարագայում բովանդակային փորձաքննությունը անցկացնում են համապատասխան ոլորտային հանձնաժողովները:

Ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի բովանդակային փորձաքննությունը անց է կացվել համապատասխան ուսումնական հաստատությունների մասնագետներին ներգրավելով: 2012թ. ընթացքում բովանդակային փորձաքննության է ենթարկվել նոր մշակված չափորոշիչների համար կազմված ուսումնական պլանները և մոդուլային ուսումնական ծրագրերը:

Փորձաքննության աշխատանքների երկրորդ խումբը վերաբերվել է ուսումնական ձեռնարկներին: Տարվա ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ը կազմակերպել է հետևյալ 12 անուն ուսումնական ձեռնարկների փորձաքննությունը:

1. Ռադիոէլեկտրոնային միջոցների տեխնիկական սպասարկում և նորոգում
2. Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում
3. Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա /խառաստ/
4. Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա /ֆրեզերագործ/
5. Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում

6. Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում /ըստ տրանսպորտի տեսակների/
7. Էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ /ըստ ճյուղերի/
8. Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
9. Ձկնաբանություն և ձկնաբուծություն
10. Հայոց լեզու ՄԿՈՒ համակարգի ուսանողների համար
11. Հաղորդակցություն և ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ
12. Համակարգչային օպերատորության հիմունքներ

Դրանց բովանդակային փորձաքննությունը կազմակերպվել է այն ուսումնական հաստատությունների մասնագետների միջոցով, որտեղ տվյալ մասնագիտությամբ ուսուցում է իրականացվում:

ՄԿՈՒԶԱԿ-ի մասնագետները տարվա ընթացքում փորձագիտական կարծիքներ են տվել նաև նախարարության կողմից հանձնարարված որոշակի իրավական և նորմատիվ ակտերի նախագծերի վերաբերյալ:

Ըստ հանձնարարականի փորձաքննության է ենթարկվել նաև մասնագիտական տարբեր հաստատությունների կազմած կարճաժամկետ դասընթացների ծրագրերը: Դրանք նախատեսված են եղել ինչպես վերապատրաստումների, այնպես էլ որակավորման բարձրացման համար:

3. ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

2012 թվին ՄԿՈՒԶԱԿ-ի բովանդակային մշակումները ներառել են հետևյալ 3 ուղղությունները.

- ա. ուսումնական պլանների և մոդուլային ուսումնական ծրագրերի մշակում,
- բ. ուսումնական ձեռնարկների և ուսումնամեթոդական նյութերի մշակում,
- գ. «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագրի նյութերի պատրաստում:

Տարվա ընթացքում ուսումնական պլաններ և մոդուլային ուսումնական ծրագրեր են մշակվել այն 17 մասնագիտությունների և որակավորումների համար, որոնց պետական կրթական չափորոշիչները մշակվել են 2012 թվին: Ուսումնական պլանները և ծրագրերը մշակելու գործընթացում ներգրավվել են ուսումնական հաստատությունների և սոցիալական գործընկերների ներկայացուցիչները:

ՄԿՈՒ մասնագիտությունների համար ուսումնական ձեռնարկների մշակումը ներկայումս բավականին լուրջ վերաբերմունք է պահանջում: Տարիներ շարունակ Հայաստանում մայրենի լեզվով մասնագիտական գրականության հիմնախնդիրը զգալի է եղել: Վերջին տարիներին որոշակի տեղաշարժ արդեն կատարվել է, ավելի քան 40 ուսումնական ձեռնարկները մեղմում են այդ բացթողման հետևանքները, սակայն դեռևս լուրջ անելիքների կարիք կա:

Համագործակցելով համակարգի ուսումնական հաստատությունների հետ, հաշվի առնելով նաև սոցիալական գործընկերների կարծիքները պատրաստվել է «Մասնագիտական կրթություն և ուսուցում» ամսագրի 2012թ. համարների նյութերը, տպագրվել է ամսագիրը:

4. ՆՈՐՄԱՏԻՎ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄՇԱԿՈՒՄ

2012թ. ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ը այս փաստաթղթերի խմբից հիմնականում զբաղվել է պետական կրթական չափորոշիչների մշակման և նախկինում մշակված չափորոշիչների վերանայման հարցերով: Նոր մշակվող չափորոշիչների խումբը ընտրվել է հիմք ընդունելով սոցիալական գործընկերների, շահագրգիռ գերատեսչությունների այլ շահագրգիռ կառույցների առաջարկությունները: Մշակվող չափորոշիչների վերջնական ցուցակը պատվիրել է ՀՀ ԿԳ նախարարությունը: Վերանայման ենթակա չափորոշիչները ընտրվել են հիմք ընդունելով որոշակի մասնագիտությունների որակավորումների համար աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության մշակված մասնագիտության նկարագրերը:

Չափորոշիչները մշակող կամ վերանայող աշխատանքային խմբերի կազմերը նույնպես ձևավորվել է հաշվի առնելով բոլոր շահագրգիռ կողմերի առաջարկությունները: Խմբերի կազմերը ձևավորվել է այդ կողմերի առաջադրած թեկնածուների խմբից:

Ընդհանուր առմամբ 2012թ. ընթացքում ձևավորվել կամ վերանայվել են հետևյալ 29 մասնագիտությունների և որակավորումների չափորոշիչները.

1. նոր մշակված չափորոշիչներ

ա. նախնական մասնագիտական կրթության որակավորումների

0515 Զարդակիրառական արվեստ/Փայտի գեղարվեստական փորագրող/

1211 Սարքավորումների տեխնիկական շահագործում/Փականագործ-գործիքագործ/

2311 Հասարակական սնունդ /Հրուշակագործ/

2902 Շինարարա-մոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում

/Որմնադիր/

2906 Տանիքագործական աշխատանքների իրականացում/ Տանիքագործ/

3106 Գյուղատնտեսական աշխատանքների տեխնիկական ապահովում

/Գյուղատնտեսական արտադրության տրակտորիստ-մեքենավար/

բ. միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների

0405 Դեղագործություն

0416 Ատամնատեխնիկական գործ

0507 Դերասանական արվեստ

0514 Դիզայն (ըստ ճյուղերի)

1004 Էլեկտրամատակարարում (ըստ ճյուղերի)

1005 Ջերմաէլեկտրակայաններ

2707 Պահածոների և սննդախտանյութերի տեխնոլոգիա

2711 Հանրային սննդամթերքի տեխնոլոգիա

- 2808 Հագուստի մոդելավորում և նախագծում
- 2809 Հագուստի պատրաստման տեխնոլոգիա
- 2819 Մպառողական ապրանքների որակի փորձաքննություն

2. վերանայված չափորոշիչներ

ա. նախնական մասնագիտական կրթության որակավորումների

- 2304 Վարսավիրական արվեստ և զարդային դիմահարդարում /Վարսահարդար/
- 2401 Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում /Ավտոմեքենաների նորոգման փականագործ/
- 2901 Վերամբարձ-տրանսպորտային միջոցների տեխնիկական շահագործում /Ավտոկռունկավար/

բ. միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների

- 0201 Իրավագիտություն
- 0603 Ֆինանսներ (ըստ ճյուղերի)
- 0604 Բանկային գործ
- 2201 Հաշվողական մեքենաներ, համալիրներ, համակարգեր և ցանցեր
- 2203 Հաշվողական տեխնիկայի և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում
- 2004 Կապի ցանցեր և հաղորդակցման համակարգեր
- 1705 Ավտոմոբիլային տրանսպորտի տեխնիկական սպասարկում և նորոգում
- 2401 Փոխադրումների կազմակերպումը և կառավարումը տրանսպորտում (ավտոմոբիլային տրանսպորտ)
- 0902 Բաց լեռնային աշխատանքներ

5. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

ՄԿՈՒԶԱԿ-ի ամենամյա աշխատանքների մեջ մշտադիտարկումները յուրահատուկ տեղ ունեն։ Արդեն 3 տարի է, ինչ հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին անց է կացվում մշտադիտարկում։ Նախորդ տարիներին այն անց է կացվել Հայաստանի այն բոլոր ՄԿՈՒ հաստատություններում, որոնցում ուսուցումն իրականացվում է կարողութենամետ պատական կրթական չափորոշիչների համաձայն։ 2012թ. մշտադիտարկում անց կացվեց բոլոր մարզերի և Երևան քաղաքի միայն 60 ուսումնական հաստատությունում։ Դրանց ընտրությունը կատարվել էր նախարարության համաձայնությամբ։ Մշտադիտարկման նպատակը միշտ էլ մեկն է եղել. գնահատել պետական կրթական չափորոշիչ ներդրման և դրան համապատասխան ուսումնական գործընթացի կազմակերպման փաստացի վիճակը, բացահայտել խնդրահարույց հարցերը, գործնական օգնություն ցույց տալ ուսումնական հաստատություններին՝ նկատված բացթողումներն ու թերությունները հաղթահարելու գործում։ Մշտադիտարկման ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել այն ուսումնական հաստատություններին, որոնցում փորձարարական կարգով չափորոշիչներ է ներդրված։ Մշտադիտարկման ենթակա ուսումնական հաստատությունների ցանկում

պարտադիր ներառվել են տարածաշրջանային ուսումնական հաստատությունները՝ պարզելու համար նրանց կողմից իրենց կարգավիճակից բխող յուրահատուկ գործառույթների կատարման մակարդակը: Մշտադիտարկումն անց է կացվել ինչպես ՄԿՈՒԶԱԿ-ի աշխատակիցների, այնպես էլ ուսումնական հաստատություններից ներգրավված առաջատար մասնագետների ուժերով:

2012թ. մշտադիտարկում է անցկացվել հետևյալ ուսումնական հաստատություններում

1. Աշտարակի արհեստագործական ուսումնարան
2. Բերդի պետական քոլեջ
3. Վարդենիսի պետական քոլեջ
4. Արմավիրի պետական ինդուստրիալ-մանկավարժական քոլեջ
5. Վայոց ձորի տարածաշրջանային պետական քոլեջ
6. Սյունիքի տարածաշրջանային պետական քոլեջ
7. Գորիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
8. Մեղրու պետական քոլեջ
9. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ
10. Հրազդանի արհեստագործական ուսումնարան
11. Աբովյանի պետական էներգետիկական քոլեջ
12. Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ
13. Երևանի թիվ 4 արհեստագործական ուսումնարան
14. Երևանի տարածաշրջանային թիվ 2 պետական քոլեջ
15. Շիրակի տարածաշրջանային պետական քոլեջ
16. Գյումրու պետական տեխնիկական քոլեջ
17. Լոռու տարածաշրջանային պետական քոլեջ
18. Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ
19. Բերդի արհեստագործական ուսումնարան
20. Արարատի տարածաշրջանային պետական քոլեջ
21. Երևանի թիվ 6 արհեստագործական ուսումնարան
22. Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ
23. ՀՊՃՀ քոլեջ
24. Արագածոտնի տարածաշրջանային պետական քոլեջ
25. Աբովյանի թիվ 1 արհեստագործական ուսումնարան
26. Աբովյանի կրթահամալիր
27. Աբովյանի պետական ճարտարագիտական քոլեջ
28. Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջ
29. Երևանի պետական գյուղատնտեսական քոլեջ
30. Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի հենակետային քոլեջ
31. Սպիտակի պետական քոլեջ
32. Ալավերդու պետական քոլեջ
33. Նոյեմբերյանի պետական քոլեջ
34. Գեղարքունիքի տարածաշրջանային պետական քոլեջ

35. Արմավիրի տարածաշրջանային պետական քոլեջ
36. Երևանի տարածաշրջանային թիվ 1 պետական քոլեջ
37. Երևանի թիվ 10 արհեստագործական ուսումնարան
38. Էջմիածնի պետական քոլեջ
39. Երևանի գրոսաշրջության, սպասարկման և սննդի արդյունաբերության հայ-հունական պետական քոլեջ
40. ՀՊԱՀ Շիրակի պետական գյուղատնտեսական քոլեջ
41. Մարալիկի արհեստագործական ուսումնարան
42. Երևանի թիվ 9 արհեստագործական ուսումնարան
43. Հանրապետական թիվ 3 հատուկ կրթահամալիր
44. Գորիսի պետական քոլեջ
45. Քաջարանի արհեստագործական ուսումնարան
46. Վանաձորի թիվ 1 արհեստագործական ուսումնարան
47. ՎՊՄԻ քոլեջ
48. Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջ
49. ՀՊՃՀ Գյումրու մասնաճյուղի քոլեջ
50. Սևանի արհեստագործական ուսումնարան
51. Սևանի պետական քոլեջ
52. Գյումրու թիվ 4 արհեստագործական ուսումնարան
53. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ
54. Երևանի պետական հումանիտար քոլեջ
55. Երևանի պետական հումանիտար տեխնիկական քոլեջ
56. ՀՊԱՀ գյուղատնտեսական պետական քոլեջ
57. Գյումրու թիվ 1 արհեստագործական ուսումնարան
58. Գյումրու պետական մանկավարժական քոլեջ
59. Երևանի մշակույթի պետական քոլեջ
60. Նաիրիի արհեստագործական ուսումնարան

6. ԸՆԹԱՑԻՎ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ԵՎ ԱՅԼ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Բացի ծրագրային բաժիններում ներառված կոնկրետ խմբի պատկանող աշխատանքներից 2012թ. ընթացքում իրականացվել են նաև հիմնարկի բնականոն գործունեության հետ կապված հետևյալ աշխատանքները.

- կազմվել է ՄԿՈՒԶԱԿ-ի 2012թ. գործունեության բիզնես պլանը,
- կազմվել է ՄԿՈՒԶԱԿ-ի 2012թ. գնումների պլանը և դրա ընթացիկ լրացումները,
- կազմվել են գնումների հայտերը, անհրաժեշտ այլ փաստաթղթեր,
- մշակվել են համապատասխան ծառայությունների ձեռքբերման հետ կապված տեխնիկական առաջադրանքները,
- կազմվել են վերապատրաստումների դասընթացների ծրագրերը,
- ըստ հանձնարարականների պատրաստվել և տարբեր հասցեատերերի է ուղարկվել գրություններ,

- պատասխանվել է պաշտոնական նամակների և գրությունների,
- որոշակի աշխատանքների կատարման կարիքների համար պատրաստվել են տարբեր ձևաթղթեր,
- ըստ հանձնարարականի և նախատեսված դեպքերում կազմվել և պատկան կառույցներին է ներկայացվել հաշվետվություններ,
- մշակվել և ամփոփվել է տարբեր ուսումնական հաստատություններից ստացված հաշվետվությունները և տեղեկությունները,
- ամփոփվել է տարբեր ծառայություններ մատուցող փորձագետների ներկայացրած հաշվետվությունները,
- ընթացիկ աշխատանքների արդյունքների մասին տեղեկություններ է ներկայացվել կադրերի բաժնին, հաշվապահությանը:

2012 թվին անց է կացվել ՄԿՈՒ համակարգի ուսանողների հմտությունների հանրապետական օլիմպիադա: Այն կարևոր նշանակություն ունի ոչ միայն համակարգը շահագրգիռ կողմերին ներկայացնելու, այլ նաև հանրության մոտ կրթության այս ոլորտի վերաբերյալ ձևավորված կարծրատիպերը կոտրելու առումով: Այդ նպատակին է ուղղված եղել նաև տեղադրված ինտերնետ բաներները, Արմնյուզ հեռուստաընկերության միջոցով հեռարձակված սոցիալական հոլովակները, ռեպորտաժները, ՄԿՈՒ հաստատությունների վերաբերյալ տպագրված տեղեկատվական նյութերը:

Իր բովանդակությամբ կարևոր նշանակություն է ունեցել պատրաստված ձեռնարկների շնորհանդեսի և մշտադիտարկման արդյունքների ամփոփման հանդիպումները:

7. ԱՐՏԱԾՐԱԳՐԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2012թ. ընթացքում ՄԿՈՒԶԱԿ-ը իրականացրել է իր աշխատանքային ծրագրով չնախատեսված հետևյալ աշխատանքները.

- ՀՀ վարչապետի հանձնարարությամբ, ներգրավելով նաև ոստիկանության և պահնորդական ծառայություններ մատուցող կազմակերպությունների մասնագետների, մշակվել է նախնական մասնագիտական կրթության «Պահնորդ» և «Թիկնապահ» որակավորումների պետական կրթական չափորոշիչը,
- Չափորոշիչը կիրառելու հարցերով անհրաժեշտ խորհրդատվություն է տրամադրվել նշված որակավորումների համար մասնագիտական ուսուցում իրականացնող հաստատություններին՝ հատկապես վերապատրաստման կարճաժամկետ դասընթացների մանրամասների վերաբերյալ:

8. ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի ՄԿՈՒ համակարգում իրականացվող բարեփոխումների համար էական կարևորություն ունի ՄԿՈՒ արդյունավետ համակարգ ունեցող երկրների փորձի և ձեռքբերումների վերաբերյալ փաստաթղթերի և նյութերի առկայությունը: Նման բովանդակության նյութեր հայերեն լեզվով անհամեմատ քիչ է, իսկ լեզվական խնդրով

պայմանավորված այլ լեզուներով նյութերից հնարավոր չէ ազատ օգտվել: Այդ պատճառով էլ յուրաքանչյուր տարի, նախարարության հանձնարարությամբ, կազմակերպվում է որոշակի ծավալով թարգմանություններ: Տարվա սկզբում ստացվել է ԿԳ նախարարության կոնկրետ հանձնարարականը, որի համաձայն էլ կազմակերպվել է թարգմանությունը: 2012թ. ընթացքում ընդհանուր առմամբ իրականացվել է 500 էջ փաստաթղթերի թարգմանություն: Փաստաթղթերը ներառում են ՄԿՈՒ ոլորտում եվրոպական առաջատար երկրների փորձի և ձեռքբերումների վերաբերյալ նյութեր:

9. ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ

ՄԿՈՒԶԱԿ-ի աշխատանքային ծրագրով նախատեսվող հետազոտական թեմաները կարևոր նշանակություն ունեն ՄԿՈՒ համակարգում բարեփոխումների ուղղությունները և հարցերը ճշտելու, ինչպես նաև անհրաժեշտ որոշումների հիմքեր ստեղծելու համար: 2012թ. ընթացքում հետազոտություններ են կատարվել հետևյալ թեմաներով.

1. Մասնագիտական կրթության համակարգում սոցիալական գործընկերության հիմնախնդիրները և հաղթահարման գործընթացները
2. ՄԿՈՒ հաստատություններում պետական ամփոփիչ ատեստավորումների նկարագիրը և արդյունավետության բարձրացման մոտեցումները
3. ՄԿՈՒ հաստատություններում գնահատման կրեդիտային համակարգի ներդրման հիմնահարցերը և մեթոդաբանությունը
4. ՄԿՈՒ հաստատություններում պրակտիկաների կազմակերպման նորմատիվային դաշտի ընդհանուր պատկերը, բարելավման ուղղություններն ու մոտեցումները
5. Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց ՄԿՈՒ ապահովման իրավական փաթեթ
6. Որակավորումների ազգային շրջանակի ներդրման և Բոլոնիայի գործընթացներից բխող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների և որակավորումների ցանկի ուսումնասիրություն:

Հետազոտությունների թեմաները երաշխավորվել է ԿԳ նախարարության կողմից: Բոլոր թեմաներով հետազոտություններն իրականացրել են 4-ական անձանցից կազմված աշխատանքային խմբերը, որոնցից մեկի վրա դրվել է աշխատանքներն համակարգողի գործառույթը: Խմբերի աշխատանքի արդյունքում բոլոր թեմաներով հետազոտությունները կատարվել են, նյութերը սահմանված ձևով ամփոփվել և տրամադրվել է ԿԳ նախարարությանը՝ ձեռք բերված արդյունքները հետագա աշխատանքներում կիրառելու նպատակով:

ՄԿՈՒ հաստատություններում իրականացվող գնահատումների նպատակը բարեփոխումների արդյունքների վերաբերյալ փաստական տեղեկություններ ձեռք բերելն է: Այս առումով իրականացվող գնահատումները որոշակի չափով տարբերվում են այդ երևույթի վերաբերյալ մեր ունեցած պատկերացումներից: Մովորաբար որևէ գործընթացի գնահատման ժամանակ բացահայտվում է, թե ինչ է կատարվել, ինչ մակարդակով է կատարվել: Այս դեպքում հիմնական շեշտը դրվում է ոչ թե կատարվածի փաստի բացահայտման վրա, այլ

նրա անհրաժեշտության հիմնավորման վրա: 2012թ. գնահատում է իրականացվել հետևյալ 5 ուսումնական հաստատություններում.

ա. Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջ

բ. Կոտայքի տարածաշրջանային պետական քոլեջ

գ. Ստեփանավանի պետական գյուղատնտեսական քոլեջ

դ. Գյումրու պետական տեխնիկական քոլեջ

ե. Երևանի թիվ 6 արհեստագործական ուսումնարան: